

891.99

2-14



Մ. Անդրէեւա

ԱՂ ԲԱՏԻ

Բ Ա Խ Տ Ը

Թարգմ. ուսերէնից.

Թ Ի Փ Լ Ի Զ

Տպար. Յ. Մարտիրոսեանցի. | Типогр. И. Мартиросіанца.
Орбелиановская ул. № 1 | 2.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го мая 1896 года.

საქართველოს
საგარეო
საზღაპრო
საგარეო
საზღაპრო
საგარეო
საზღაპრო

საგარეო
საზღაპრო
საგარეო
საზღაპრო

ԱՂԲԱՏԻ ԲԱԽՏԸ

Ա



Չնան երկար գիշերներէց մէկն ար-
դէն լուսանալու վրայ էր: Փարիզի այս ու այն
փողոցում մէկ-մէկ սկսեցին երևալ փերեզակներն
ու վաճառականները, որոնք զանազան ապրանք-
ներ էին տանում շուկան վաճառելու: Բայց շու-
կան դեռ դատարկ էր. միայն պահապաններն
էին, որ շտապում էին փողոցն աւելել և աղբը
վերցնել: Նրանք այնպէս զբաղուած էին իրանց
գործով, որ չնկատեցին փոքրիկ տղային, որ
շուկային մօտիկ մի մեծ տան քարէ սանդուխ-
քին լինուած՝ խորը քնած էր: Փամացոյցը վե-
ցը զարկեց: Հուկայում երևեցան գետնախնձո-
րով և որսի կենդանիներով ծանր բեռնաւոր-
ուած սայլակներ: Անիւների ճրճուոցից քնած
տղան զարթեց: Նա վերկացաւ, ճմլկոտաց, յօ-

4051-84

բանջեց, քնատար աչքերը տրորեց ու ծանր քայլերով առաջ գնաց: Միքանի քայլ անցնելով՝ փողոցի անկիւնում նա տեսաւ Աստուածամօր քարէ արձանը, որ դրած էր պատի մէջ փորուած խորշում: Այսպիսի արձաններ Փարիզում շատ կան: Բարեպաշտ մարդու մէկը մի պտակ էր կախել այն ծածկութից, որ արձանը պահպանում էր անձրևից: Տղան գլխարկը վերցրեց և ջերմեռանդութեամբ երեսը խաչակնքեց: Նրան այնպէս թուաց, թէ Աստուածամայրը քաղցրութեամբ նայեց իւր վրայ: Մանուկը առաւօտեան աղօթքը շշնջալով՝ ուսը ձգեց արկղիկը, միքանի քայլ արաւ և մի տան առաջ կանգնելով՝ դուռը բաղխեց:

— Ո՛վ դուք, բարի մարդիկ, կանչեց նա, բաց արէք:

Մի քանի ըոպէից դուռը բացուեց. մի պառաւ, բարկացկոտ դէմքով, գիշերուալ արախչինը գլխին, երևաց դրան շեմքին:

— Այդ ո՞վ է, Հարցրեց պառաւն այնպիսի խիստ ձայնով, որից ոչ մի լաւ բան չէր կարելի գուշակել:

— Արդեօք ծխնելոյցներ չունի՞ք մաքրելու,

կամ որեէ բան նորոգելու, քաղաքավարութեամբ Հարցրեց տղան, գլխարկը վերցնելով:

— Ա՛յ, գրողը ձեզ տանի, էլ Հանգիստ չկայ ձեզանից, կորիք, ոչինչ Հարկաւոր չէ:

Եւ պառաւը զայրացած՝ դուռը վրայ խփեց: Տղան լուռ ու մուկ առաջ գնաց և հետևեալ տան դուռը բաղխեց, բայց ամեն տեղ միևնոյն ընդունելութիւնը գտաւ:

— Երևի դեռ շատ վաղ է, վճռեց նա ինքն իրան. այստեղ, Փարիզում մարդիկ աւելի ուշ են վեր կենում, քան մեր գիւղում:

Եւ մայթի վրայ նստելով՝ արկղից մի կտոր չոր Հաց Հանեց և սկսեց ուտել:

Արդէն երկու շաբաթ էր, որ տղան թողել էր իւր Հայրենի գիւղը: Նա գալիս էր առանց շտապելու. ճանապարհին տեղ-տեղ միքանի օրով մնում էր, որպէս զի մի բան վաստակէ: Նրան ճանապարհածախս չէին տուել. իսկ ուտել-խմել Հարկաւոր էր: Նա խեղճերի մօտ գտնում էր կերակուր և իջևան. իսկ Հարուստ քաղաքներում ոչ մի օգնութիւն չէր գտնում: Ուրեմն մայրը Հրաժեշտի ժամին զուր չէր խրատ տուել նրան թէ. «երբ կարիք ու-

նենաս՝ օգնութեան համար հարստին չգիմես, այլ աղքատին դիմիր, որովհետև, ինչպէս առաճն ասում է՝ «աղքատի հայր աղքատը կըհասկանայ»: Այսպէս էլ եղաւ: Չնայելով որ Փարիզն ահագին քաղաք էր՝ բայց նա տեղ չէր գտնում ապաստանելու: Նա ուշ հասաւ քաղաք, յոգնեց, քաղցից և անսովոր աղմուկից գլուխը սկսեց պտոյտ դալ: Նա շատ ուրախացաւ, երբ վերջապէս կարողացաւ մի պարապ անկիւն գրտնել, որտեղ պառկեց և իսկոյն քնեց:

Նա Փարիզ էր եկել իւր ծննդավայրից— Սափոյայից: Սափոյան մի լեռնոտ և աղքատ երկիր է Ալպեան սարերի գաւիւվայրների վրայ, որոնք դարձուած են դէպի Փեննելի լիճը: Սափոյացիներից շատերն իրանց որդոց գործի են ուղարկում արտասահման, առաւելապէս Փարիզ: Փարիզում սափոյացիներ շատ կան: Նրանցից ոմանք շրջելով փողոցէ փողոց՝ պարելով ու երգելով գուարճացնում են ամբողջ և այսպէս փող վաստակում. ոմանք տներում մանր-մուկեր գործեր են անում— ծխնելոյզներ մաքրում, ամանեղէններ նորոգում. ոմանք էլ շներ ու կապիկներ են խաղացնում և այսպիսով իրանց համար

ապրուստ ձարում: Սափոյացիներն ազնիւ ու համեստ մարդիկ են. նրանք շատ խնայողութեամբ են ապրում և այդպիսով փող չետ ձգում: Զատերը մի փոքր գումար հաւաքելուց լետոյ հայրենիք են վերադառնում, իսկ ոմանք Փարիզին իբրև երկրորդ հայրենիքի ընտելանալով՝ այնտեղ էլ մնում են մինչև իրանց մահը: Նրբանք իրանց ոյժի լաւ ժամանակ օրավարձով են աշխատում, իսկ երբ ծերանում են՝ որևէ երաժշտական գործիք ձեռքերն առած՝ փողոցէ փողոց են շրջում:

Հենրիխը—այսպէս էր տղայի անունը— սափոյացի մի խեղճ կնոջ որդի էր և ինչպէս որբիշ շատ սափոյացիք՝ նա էլ Փարիզ էր եկել բախտ որոնելու: Նրա առաջին փորձը, ինչպէս տեսանք՝ անյաջող եղաւ, բայց մանուկը չլուսահատուեց, այլ ախորժակով սկսեց կրծոտել իւր ունեցած չոր հացի կտորը, որ կազմում էր նրա բոլոր նախաճաշը: Այդ թէև քիչ բան է մանկական առողջ ստամոքսի համար, բայց սափոյացին սովոր է քչով էլ բաւականանալ:

Հենրիխը փորը մի քիչ կշտացնելով՝ շարունակեց իւր ճանապարհը: Գնում էր և աչ-

քերը չորս արած ուշադրութեամբ դիտում իւր շուրջը: Նա անցել էր ուրիշ մեծ քաղաքներով, բայց ոչ մէկը Փարիզի պէս չէր եղել: Աջ ու ձախ պալատներ էին, իսկ կտուրների վրայ անթիւ ու անհամար ծխնելոյզներ:

—Ա՛յ, այստեղ գործ շատ կըլինի, մտածեց տղան և սիրտը թունդ ելաւ ու երեսն ուրախութեամբ փայլեց. բայց նա նոյն բոպէին կըկին տխրեց մտածելով, որ եթէ ծխնելոյզներն այնքան շատ են՝ ուրեմն իրան պէս հաց փընտրող տղայք էլ շատ կըլինին:

Այսպէս ինքն իրան մտմտալով՝ Հենրիխը հասաւ Սենա գետի կամուրջը. որովհետև այս գետը շատ նեղ է՝ ուստի մէկ ամից միւս ամի լաւ երևում է: Միւս ամի վրայ եղած տրներն այնքան հոյակապ չեն, այս պատճառով Հենրիխը վճռեց իւր քալերը դէպի այն կողմն ուղղել, յուսալով որ այնտեղ իրան աւելի լաւ կընդունեն:

Կամուրջը կամարաձև էր շինուած, որպէս զի տակովը բեռնակիր նաւակներ կարողանային անցնել. իսկ կամարը—սանդխաձև, ոտքով անցնողների համար: Հէնց որ Հենրիխը ոտքը ա-

ռաջին աստիճանի վրայ դրեց՝ մի ինչոր փայլուն բան նրա աչքովն ընկաւ. նա իսկոյն կընացաւ և վերցրեց—մի ոսկէ մեղալիօն, ոսկէ շղթայով:

Այս մեղալիօնն երևի երեկոյեան ժամանակ էր կորցրած, որովհետև եթէ ցերեկով ընկած լինէր՝ նրան նկատած և վերցրած կըլինէին:

Հենրիխն իւր գիւտը ձեռքում սեղմած՝ փոքր ինչ կանգ առաւ:—Ծախեմ և հողը մօրս ուղարկեմ, անցաւ նրա մտքովը. երևի մի քսան ֆրանկ *) կըտան:

Խեղճ տղայի մտքովն էլ չէր անցնում, որ իւր ձեռքում բռնած մեղալիօնը ո՛չ թէ քսան, այլ ամենաքիչը հինգ հարիւր ֆրանկ արժէր: Բայց նա սրտեղից կարող էր այդպիսի թանկազին բաների արժէքն իմանալ:

*) Փրանկը արժէ մօտ 37 կոպէկ:

խօսում, պատասխանեց հայրը. մենք միթէ կըհամաձայնենք, որ մեզ վարձատրեն այն պատճառով, որ մենք ազնիւ ենք վարուել:

Եթէ քսակը տարիներով մնար էլ նրանց մօտ, փիթէր ու ոչնչանար՝ ազնիւ սավոյացին դարձեալ նրան ձեռք չէր տայ:

Սակայն նա երկար ժամանակ չմնաց նրանց մօտ. ճանապարհորդը շուտով գլխի ընկաւ և յետ դարձաւ քսակը վերցնելու: Նա շատ աշխատեց սավոյացուն վարձատրել, բայց սա մերժեց. որչափ էլ նրա կնոջը և որդուն ստիպում էր փող վերցնել՝ բայց նրանցից ոչ մէկը մի կոպէկ էլ չվերցրեց:

— Ես այս մեղալիօնը կըպահեմ՝ մինչև տէրը գտնուի, վճուեց Հենրիխը և մեղալիօնը վզեցը կախեց:

Նա կամուրջն անցնելով՝ քայլերը համարձակ ուղղեց դէպի ամենամօտիկ տունը, որ դուռը բաղխէ և գործ խնդրէ:

Արեգակն արդէն բաւական բարձրացել էր: Փողոցներում կենդանութիւն էր տիրում, այնպէս որ Հենրիխը երկիւղ չունէր՝ թէ կարող է մէկի հանդիստը վրդովել: Յանկարծ նա նկատ

Բ



ենրիխը մեղալիօնը ծախելու մասին երկար չմտածեց: Նա շուտով մտաբերեց իւր մօր խօսքերը. — «Լաւ է մարդ քաղցած մեռնի, քան ուրիշի սեպհականութեանը ձեռք տայ»:

Բացի սրանից նա լիջեց և հետևեալ դէպքը: Մի անգամ նրանց տանը մի անցորդ էր վեր եկել գիշերելու. նրա քնած անկողնում փողերով լիքը մի քսակ գտան. թէև այն ժամանակ Հենրիխի ծնողները շատ էլ կարիքի մէջ էին, բայց նրանց մտքովն էլ չանցաւ, որ այդ փողերից օգտուէին:

Միայն մայրն ասաց.

— Երանի՛ թէ տէրը շուտով վերադառնայ. անշուշտ մեզ կըվարձատրէ՝ երբ իւր կորուստը վերադարձնենք:

— Ա՛յ կնիկ, դու առանց մտածելու ես

տեց, որ այն սանդուխքի մօտ, որի վրայ ինքն էր ուզում բարձրանալ, կանգնած է սաւոյացու հագուստով մի տղայ և ձեռին էլ Հենրիխի արկղիկի նման փոքրիկ արկղիկ ունի բռնած, դէմքն էլ կարծես ծանօթ լինի: Հենրիխը հետաքրքրութեամբ նայեց նրան. նա էլ Հենրիխին էր նայում:

— Վա՛, էդ դու ես, Պիէր:

— Ե՛ս եմ ու կամ, Հենրիխ:

Եւ երկու հայրենակիցներն իրար փաթաթուեցին: Պիէրը գիւղից երեք ամիս առաջ էր գուրս եկել, ուստի նա Փարիզում խամ չէր և կարող էր իւր ընկերոջն առաջնորդ լինել:

Այժմ այն մեծ քաղաքում օտարութիւնը Հենրիխի համար այնքան ծանր չի լինի: Պիէրը ամեն բան զիտէ. նա շատ բարի տղայ է. Հենրիխին ուրախութեամբ ցոյց կըտայ, թէ որտեղ կարելի է գործ գտնել: Հենրիխի ուրախութեանը չափ չկար. նա մի օրուայ մէջ և թանկագին գանձ և ընկերոջ էր գտել:

Երբոր մարդ մտածում է, թէ տասը տարուց լետոյ արդեօք ինչ է լինելու՝ նրան թւում է, որ այդքան չի ապրի, մանաւանդ երբ որևէ

բանի է սպասում: Իսկ երբ տասը, քսան տարի անցնում է, և մարդ մտաբերում է անցեալը՝ նրան մի ակնթարթ է թւում:

Չատ ժամանակ չէ, որ նրանք մանր երեխաներ էին, ասում են ծերերը իրանց հասակն առած որդոց մասին, — իսկ այժմ արդէն իրանք երեխաների տէր են դարձել:

Հենրիխն աւելի քան տասը տարի ապրեց Փարիզում և կարելի է ասել, որ վատ չէր ապրում: Նրա համակրելի դէմքը գրաւում էր ամենքին, իսկ երբ գտնում էին, որ այդ դէմքը նրա ազնիւ հոգու արտացոլումն է՝ սկսում էին նրան սիրել, ոչ միայն արտաքին գեղեցկութեան, այլ և ներքին արժանաւորութիւնների պատճառով:

Սկզբում թէև նա քիչ էր վաստակում, բայց կարողանում էր այնպէս անել, որ վաստակի մեծ մասը մօրն էր ուղարկում: Հետզհետէ սկսեց աւելի շատ ուղարկել, մինչև համոզուեց, որ մայրն այլ ևս կարիք չէ զգում:

Այս ժամանակամիջոցում նա մի քանի անգամ հայրենիք գնաց, բայց ամեն անգամ կարճ ժամանակով: Սրա գլխաւոր պատճառն այն էր, որ թէ իրան և թէ մօրը ապրուստ էր հար-

կաւոր. իսկ երկրորդ՝ Փարիզի փողոցային աղ-
մկալի կեանքը, որին Հենրիխը շատ էր ընտե-
լացել՝ գրաւում էր նրան:

Մեղալիօնը դեռ էլի նրա մօտն էր մնում:
Մեղալիօնի մէջ մօտ տասնուվեց տարեկան մի
գեղեցիկ աղջկայ լուսանկար էր դրուած:

Հենրիխը յաճախ նայում էր այս լուսա-
նկարին: Նա աշխատում էր նրա գծագրութիւ-
նը իւր լիշողութեան մէջ լաւ տպաւորել:

Փողոցները շրջելիս, կամ որևէ գործով
տները մտնելիս՝ նա պատահած կանանց դէմ-
քերն ուշադրութեամբ դիտում էր, որ իրան
ծանօթ գծագրութիւնը գտնէ: Բայց ի զուր:
Նա մեղալիօնի տիրոջը գտնելու յոյսը համա-
րեա կորցրել էր. բայց և այնպէս իւր նը-
շանածի հետ մի անգամ քիչ էր մնում խռո-
վէր՝ երբ նա խնդրեց Հենրիխից, որ մեղալիօնն
իրան ընծայէ:

Փիւլետտը մի փականագործի աղջիկ էր,
որոնց տանը բնակւում էր Հենրիխը Փարիզ գա-
լու օրից: Այն ժամանակ երկուսն էլ երեխայ
էին. երեկոները, երբ Հենրիխը օրուայ աշխա-
տանքից տուն էր վերադառնում, իսկ Փիւլետ-

տը դերձակ կնոջ մօտից, որտեղ սովորում էր
կար անել՝— սկսում էին միասին ուրախ-ուրախ
խաղալ: Սրանք հէնց մանկութիւնից շատ մտեր-
մացան, իսկ հասակներն առնելով՝ իրար հարս
ու փեսայ ընտրեցին: Հարսանիքի մասին դեռ
խօսք չկար, որովհետև առաջ հարկաւոր էր մի
փոքր փող լետ ձգել. իսկ Հենրիխն այդ չէր
կարողանում, քանի որ պահում էր մօրը, որին
անչափ սիրում էր:

Չատ անգամ մեր երիտասարդ գոյգը խօ-
սում էր մեղալիօնի մասին. այդ ժամանակ Փիւ-
լետտը նրա առիթով օղային ամբոյցներ *) էր
շինում. իսկ Հենրիխը լոււմ էր, նրա միտքն
ուրիշ էր: Մի անգամ Հենրիխին մի նամակ
տուին, որ տանի մի հարուստ տիկնոջ յանձնէ:
Հասակաւոր տիկինը նամակը ստանալով՝ Հեն-
րիխին խնդրեց փոքր ինչ սպասել, իսկ ինքը
գնաց միւս սենեակը, որ պատասխանը գրէ:

Հենրիխը մենակ մնալով՝ սկսեց սենեակի
սարք ու կարգն ուշադրութեամբ գննել: Յան-

*) Օղային ամբոյցներ շինել՝ նշանակում է այն-
պիսի լաւ-լաւ բաներ երևակայել, որոնք կատարուե-
լու չեն:

կարծ նա կարծես արձանացած մնաց տեղն ու տեղը:

Նա տեսաւ պատից կախած մի պատկեր, որ բոլորովին նման էր իւր մեղալիօնում եղած լուսանկարին:

Այն, հէնց նա է. Հենրիխը չէ սխալուծ. բայց հիմա ի՞նչ անէ. եթէ տանտիկնոջը հարցնէ, թէ այս ո՞ւմ պատկերն է՝ նա գուցէ իրան յանդուզն անուանելով՝ տանից դուրս անէ. մեղալիօնն էլ ուղղակի տալ չէ կարելի. — գուցէ տիկնոջ ու պատկերի կամ մեղալիօնի մէջ ոչինչ կապ չկայ:

Մինչ նա այսպէս մտածմունքի մէջ կանգնած էր՝ տիկինը նորից եկաւ: Հենրիխը սիրտ արաւ և պատից կախած լուսանկարը ցոյց տալով՝ հարցրեց.

— Տիկին, ներեցէ՛ք համարձակութեանս, այս ո՞ւմ պատկերն է:

— Սա իմ հանգուցեալ աղջկանս պատկերն է, տխրութեամբ պատասխանեց տիկինը. — Հաւանում ես, այնպէս չէ. մի տես, ի՞նչ սիրուն է: Ինչպէս երևում էր՝ որդեկորոյս մայրն ու-

րախ էր, որ առիթ ունէր իւր կորստի մասին մէկի հետ խօսելու:

— Ես նրան երկու անգամ կորցրի, շարունակեց տիկինը, — մի մեղալիօն ունէի նրա լուսանկարով, որտեղ նա այնպէս լաւ էր դուրս բերած, կարծես կենդանի լինէր. և ես կորցրի այն մեղալիօնը:

— Ահա՛ ձեզ այն մեղալիօնը, ասաց Հենրիխը և վզից հանելով տուեց տիկնոջը:

Մօր ուրախութիւնն այնքան մեծ էր և անսպասելի, որ քիչ մնաց ուշքը կորցնէր: Հենրիխը նրան օգնեց բազկաթուռի վրայ նստելու:

սալոյացու կոշտ ձեռքը, խնդրեց որ իրան բարեկամ համարէ և կարիք ունեցած ժամանակ համարձակ զիմէ իւր օգնութեանը:

Յետոյ իւր յուշատետրը հանելով՝ զրեց նրա անունը, ազգանունը, նրա զիւղի և գաւառի անունները, այնպէս որ տիկինն ուղած ժամանակ կարող էր նրան գտնել:

— Այդ ինչ հարկաւոր է ձեզ, յարգելի տիկին, պարզամտութեամբ հարցրեց Հենրիխը:

— Երբոր Սալոյա երթամ ճանապարհորդելու՝ քո մօրը կ'այցելեմ, պատասխանեց տիկինը:

«Ուզում է մօրս փող տալ, մտածեց Հենրիխը, բայց նա էլ, զիտեմ, չի վերցնի. ինչին է պէտք նրան փող, քանի որ ունի մի որդի, որ նրան օգնում է, և նա կարիք չունի ուրիշի օգնութեան»:

Հենրիխը տուն վերադառնալով՝ այս բոլորը պատմեց Ֆիլիստոին. նա կարծում էր, որ նշանածը կրգովէ նրա արարմունքը, բայց հակառակը դուրս եկաւ:

— Ա՛յ, խելքին նայեցէք, երկու հարիւր Ֆրանկ են տալիս, և սա չէ վերցնում. չէ՞ որ

Գ



իկինը փոքր ինչ հանգստանալով՝ հարց ու փորձ արաւ, թէ Հենրիխը սրտեղ և ինչպէս էր գտել մեղալիօնը. իսկ վերջը նրա ազնութեամբ գրաւուած՝ կարեկցութեամբ տեղեկացաւ, թէ ո՞վ է ինքը, սրտեղացի է, ո՞վ են նրա ծնողքը: Յետոյ նա գրասեղանի արկղը բանալով՝ այնտեղից երկու հարիւր Ֆրանկ հանեց և առաջարկեց Հենրիխին ասելով.

— Այս գումարը խոստացել էի տալ այն մարդուն, ով որ մեղալիօնը ինձ կըհասցնէ. թէպէտ նրա արժէքն այդչափ է, բայց ինձ համար՝ անգին է:

Հենրիխը քաղաքավարութեամբ հեռացրեց տիկինը ձեռքը ասելով. «ազնութեան համար ես վճար չեմ վերցնում»:

Տիկինը խորը զգածուած՝ սեղմեց աչքիւ

այն փողով կարող էինք տուն ու տեղ լինել, հարսանիք անել. այ լիմանր, լիմանր:

Հենրիխը մի խօսք անգամ չասաց: Նա իւր ունեցած-չունեցածը հաւաքեց և տանից դուրս եկաւ: Ծերունի հայրը յորդորում էր նրան մնալ, բայց ի դուր:

— Ո՛չ, վճռական կերպով պատասխանեց Հենրիխը. այն աղջիկը, որ ինձ յանդիմանում է իմ ազնուութեան պատճառով՝ չէ կարող ինձ կին լինել:

Անցան տարիներ... Հենրիխն արդէն քառասուն տարեկանից աւելի էր: Զարունակ միատեսակ կեանք վարելով՝ անց էր կացնում իւր օրերը. աշխատում էր, պահում էր մօրը, որին մի-մի անգամ այցելում էր: Իսկ այն տիկնոջը էլ առիթ չունեցաւ տեսնելու:

Մի անգամ օրուայ աշխատանքից տուն դառնալով՝ նա անսպասելի կերպով հանդիպեց մի ոտտիկանի, որ ցցուած կանգնած էր իւր դրան մօտ և իրան էր սպասում:

Նա ամենևին չվախեցաւ, որովհետև դի-

տէր, որ ինքն երբէք ոչ մի յանցանք գործած չունի: Ոտտիկանը նրան մի թուղթ յանձնեց, որով նօտարը նրան իւր մօտ էր հրաւիրում: Հենրիխը սաստիկ հետաքրքրուած գնաց նօտարի մօտ:

— Գն՛ք էք սավոյացի պ. Հենրիխը, հարցրեց նօտարը:

Հենրիխը սովոր չէր, որ իրան պարսն անուանէին, այդ պատճառով շփոթուեց և իսկույն չկարողացաւ պատասխանել:

Նօտարը նրան յայտնեց՝ որ մարկիզուհի Սօլանժը (Հենրիխը չիշեց, որ մեղալիօսի տիրուհին այսպէս էր կոչոււմ) վախճանուել է և Հենրիխին կտակել է տարեկան հազար Ֆրանկ կենսաթոշակ, որ նա մինչև մահը ստանայ՝ որտեղ և երբ կամենայ:

Հենրիխը չէր կարող մերժել մեռած մարդու նուէրը. ուստի նա համաձայնեց կտակին և գնաց իւր հայրենիքը— Սավոյա:

Նա իրան բաւական յոգնած էր զգում. մայրն էլ գառամել էր, մի ոտն արդէն գերեզմանումն էր: «Նա էլ երկար չի ապրի, այսուհետև պէտք է նրա հետ լինեմ, մտածում

էր Հենրիխը, ա՛յ թէ կուրախանայ պառաւ
մալրա՛ երբ կիմանայ, որ մենք ապահովուած
ենք, և ես նրանից էլ բաժանուելու չեմ»:

Այսպէս երազում էր խեղճ սափոյացին չը-
գուշակելով թէ ճակատագիրը նրան ինչպիսի
վիշտ է պատրաստում: Երևի պառաւին վիճա-
կուած չէր իւր որդու հետ ապրել: Նա որդու
վերադառնալուց միքանի ամիս առաջ մեռել
էր: Հենրիխը մօր մահը ճանապարհին իմացաւ:
Նա այլ ևս չուզեց իրանց թափուր մնացած
խրճիթը մտնել, այլ ուղղակի գերեզմանատուն
գնաց և քարաշէն պարսպի զրանը կանգնեց:
Նրա ոյժը չէր պատում, որ այնտեղ մտնէր և
մօր սիրալիւր համբոյրների փոխարէն՝ նրա սառը
գերեզմանը գտնէր:

Գ



Գմբողջ կեանքումս ես մօրս համար աշ-
խատեցի, մտածում էր Հենրիխը, և այժմ, երբ
նրան պիտի մխիթարէի և ինքս էլ հանգստա-
նալի՛ մէն-մենակ եմ մնացել: Եթէ ես այնպէս
խստապահանջ չլինէի ինձանից՝ ժիւլետտը իմ
կինը կրինէր, և այս կորուստս գուցէ հեշտու-
թեամբ տանէի: Բայց ո՛չ, ես իրաւունք չունիմ
տրտնջալու: Երբ առաջին անգամ Փարիզ գնա-
ցի՛ ոչ մի ապաստանարան չգտնելով՝ քնեցի
բացօթեայ մի լայն փողոցում. այն ժամանակ
Աստուածամայրն ինձ պահպանեց և լետոյ էլ
միշտ հոգում էր իմ մասին և ազատ էր պա-
հում ամեն տեսակ փորձութիւններից: Այո, իմ
խիղճը հանգիստ է: Գու ինձ տեսնում ես երկ-
նալին բարձունքներից, կարգում ես իմ հոգու
մէջ եղածը, և ես զգում եմ, մայր իմ, որ ինձ
օրհնում ես երկնքից:

Ահա՛ գալիս եմ, որ գերեզմանդ համբուրեմ:
Եւ նա համարձակ քայլերով պարսպից ներս
մտաւ:

Անցան տարիներ... Հենրիխն արդէն ծե-
րացել էր, նրա աչքերը կուրացել էին. նա ապ-
րում էր իւր հայրական խրճիթում, որ ինքը
նորոգել և կարգի էր բերել: Նրա մօտ ապրում
էր Գուստաւ անունով մի որբ, խարտեաշ տղայ,
որին հարազատ որդու պէս էր պահում: Հեն-
րիխը պարսպութիւնից սկսեց փանդիւռի վրայ
նուազել սովորել: Նա ամբողջ օրերով ածում էր,
բայց նրան լսող չկար. Գուստաւն էլ գերադա-
սում էր իւր ընկերների հետ լեռները վրայ
թափառել:

— Գուստաւ, կուզենայիր Փարիզը տեսնել,
մի անգամ հարցրեց ծերունին:

— Ուզում եմ, պատասխանեց Գուստաւը, —
ասում են, այնտեղ շաքարեղէն շատ կայ:

— Եթէ այդպէս է՝ գնանք: Այնտեղ ջամ-
բազներ, պարողներ և ուրիշ շատ հետաքրքիր
բաներ կրտեսնես. շաքարեղէն էլ քեզ համար
շատ կրգնեմ:

Ծերունին վճռում է գնալ: Այնտեղ ես

փանդիւռի վրայ կընուազեմ և Գուստաւն էլ ինձ
կառաջնորդէ: Այսպիսով մենք մեզ համար ապ-
րուստ կըճարենք, իսկ իմ թոշակից Գուստաւի
համար զբամազլուխ կըկազմուի:

Այսպէս էր բացատրում ծերունին իւր դի-
տաւորութիւնը հարեւաններին, որոնք շատ էին
զարմանում նրա այս վճռի վրայ:

Բայց գնալու իսկական պատճառն այն էր,
որ ծերունի Հենրիխը Փարիզին շատ էր կարօ-
տել, թէև այդ բանը ոչոքի՛ մինչև անգամ
ինքն իրան՝ չէր ուզում խոստովանել:

Վ Ե Ր Ջ

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

1848

Faint, illegible text or markings at the top of the page.

102

Ер	№	309/16
МАГ	11	10
АР		

36797